ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

11 հունիսի 2013 թվականի **թիվ 129** քաղ. Մոսկվա

Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» 2011 թվականի նոյեմբերի 18-ի պայմանագրի 3–րդ հոդվածին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. ««Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն ընդունելու մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշման մեջ կատարել հետեյալ փոփոխությունները.

ա) 3.1-րդ ենթակետը շարադրել հետեյալ խմբագրությամբ՝

«3.1. «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (այսուհետ՝ Տեխնիկական կանոնակարգ) ուժի մեջ է մտնում 2013 թվականի հուլիսի 1-ից՝ բացառությամբ կաթին ու կաթնամթերքին, մսին եւ մսամթերքին ու դրանց արտադրության, պահպանման,

փոխադրման, իրացման եւ օգտահանման հետ կապված գործընթացներին ներկայացվող պահանջների: Մինչեւ կաթին ու կաթնամթերքին, մսին եւ մսամթերքին ու դրանց արտադրության, պահպանման, փոխադրման, իրացման եւ օգտահանման հետ կապված գործընթացներին ներկայացվող պահանջները սահմանող Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ մտնելու օրն այդպիսի արտադրանքի եւ դրա արտադրության, պահպանման, փոխադրման, իրացման եւ օգտահանման նկատմամբ գործում են Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերի կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրության դրույթները».

բ) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.3[1]-րդ ենթակետով՝

«3.3[1]. Մինչեւ 2014 թվականի հուլիսի 1-ը թույլատրվում է այն արտադրանքի արտադրությունն ու Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ բաց թողնելն առանց համապատասխանության պարտադիր գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերի եւ առանց համապատասխանության ազգային նշանով (շուկայում շրջանառության նշանով) մակնշման, որը նախքան Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը ենթակա չի եղել Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանության պարտադիր գնահատման (հավաստման):».

գ) 3.4-րդ ենթակետում «Որոշման,» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ սույն Որոշման 3.3[1]-րդ ենթակետում նշված արտադրանքի» բառերը»:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահի ժ/պ՝ **Տ. Վալովայա**